

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՃԱՐԱՎԵՐՈՒՄԻ ԻՆՅ ԻՆՍԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սկիզբը՝ թիւ Բ.

* * *

1934 թ. վերջը Ճարավուսի հայկական անդորրը մթագնած էր: Նորակազմ համայնքը ներգրաւուած էր գաղափարական հարցերու մէջ, որ պարբերաբար պիտի մշտնապատէր հայրենակիցներու խաղաղ ու հաշտ կեանքը:

ՀԲԸՄ-ը ծրագրած էր իր սեփական դպրոցը ունենալ Ճարավուսի մէջ, եւ այս ծրագիրի իրականացման համար կազմակերպչական աշխատանք կը տարուէր: Ազգայիններէն ոմանք Ազգ. Մեսրոպեան վարժարանը բաւարար կը համարէին այդ փոքրաթիւ համայնքի կրթական պահանջքը լրացնելու, եւ նոր դպրոցի մը բացումը, ըստ ոմանց, կրնար պառակտման պատճառ դառնալ: Քահանայ հայրը խորհրդակցական հանդիպում կ'ունենայ ՀԲԸՄ տեղւոյն վարչութեան¹ ատենապետ՝ Աւետիս Գնաճեանի եւ թաղականներէն՝ Ղազար Աղա Ղազարեանի հետ: Սակայն հակառակ տարուած աշխատանքներուն, Սեպտեմբերի վերջը 85 աշակերտներով կը բացուի տեղւոյն Ազգային վարժարանը՝ անուանակոչուելով Վարդանեան: Կարճ ժամանակով Վարդանեան վարժարանը կը փակուի: Սակայն կառավարութեան թոյլտուութեամբ նոյն տարուան Նոյեմբերի 29-ին կը վերաբացուի վարժարանը: Առաջին տնօրէնը՝ Ներսէս Գարամանուկեան, իսկ մանկապարտիզպանուհին՝ Աղաւնի Ֆատրեղեան²:

Ճարավուսի Ս. Աստուածածին եկեղեցին ի սկզբանէ չէր ունեցած մնայուն դպրապետ, ինչ որ կարիքը կը զգացուէր: Բայց այդ բացը գոցած էին քանի մը եկեղեցասէր դպիրներ, որոնք կամաւոր կերպով կը

¹ ՀԲԸՄ անդամները եղած են՝ Աւետիս Գնաճեան, Հաճեան, Յարութիւն Ֆատրեղեան, Յարութիւն աղա Թորոսեան, Ներսէս Նղոյեան եւ Սարգիս Սարգիսեան: Տէս, Լ. ՊԱՐՄՈՒՄԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 69:

² Անդ, էջ 69:

փրկէին կացութիւնը՝ Գրիգոր աղա Մխիթարեան, Մկրտիչ Թորոսեան եւ Մկրտիչ Խտրլարեան:

Տ. Զաւէն քահանայն ժողովուրդը եկեղեցւոյ մօտեցնելու կարեւոր ազդակ կը համարէ «ներդաշնակ երգեցողութիւնը» եւ Ճարապլուսի եկեղեցին կ'օժտէ մնայուն դպրաց դասով: Դպրոցական (Մեսրոպեան) ձայնաւոր տղաքը կը համախմբէ շուրջը եւ շարունակական փորձերով կը մարզէ զանոնք ու կը կազմէ դպրաց դաս: 1937 թ. Վարդանեան Երկսեռ վարժարանի աշակերտութիւնը էւս իր մասնակցութիւնը կը բերէ դպրաց դասին: Անձնապէս իր մասնակցութիւնը կը բերէ տնօրէն՝ Ներսէս Գարամանուկեանը:

1937 թ. Ճարապլուս կ'ունենայ իր ամառնային վարժարանը շնորհիւ Տ. Զաւէն քահանային: Տէր հայրը, կրթական աշխատանքի անբաժան մէկ մասնիկը համարելով կրօնական գործը եւ Ճարապլուսի անսանձ տղաքը հեռու պահելու չար մղումներէ, կը մտածէ ամառնային վարժարան մը բանալ: Այս գծով պաշտօնագրեր կ'ուղղէ Թաղական խորհուրդին, Մեսրոպեան եւ Վարդանեան վարժարաններու հոգաբարձութեանց, որոնք մեծ հաճոյքով կ'ընդառաջեն եւ կը խոստանան աջակցիլ տէր հօր եւ թելադրել ծնողներուն, որ ուղարկեն իրենց զաւակները:

26 Յուլիս 1937 ամառնային վարժարանը կը բանայ իր դռները: Երկսեռ աշակերտութեան թիւը կը հասնի 117-ի³, հինգէն մինչեւ տասներեք տարեկան երեխաներով: Իսկ ուսումնական ծրագիրը՝ թուաբանութիւն, աղօթքի եւ մաղթանքներու ուսուցում, կրօնական եւ աշխարհիկ երգերու ուսուցում, բարոյախօսութիւն եւ այլն: 1938 թ. ամրան Ճարապլուսի մէջ կրկին իր դռները կը բանայ ամառնային վարժարանը, բայց այս անգամ իւրեւն Ջէնեանի յանձնարարութեամբ: Նոյն թուականի Օգոստոսին պրն. Ջէնեան կը ժամանէ Ճարապլուս՝ սկսած գործը ստուգելու համար: Նոր կարգադրութեամբ ամառնային դպրոցը կը բաժնուի երեք կարգերու՝ փոքրերու, կրտսերներու եւ երէցներու: Աշակերտութեան թիւը կը հաշուէր՝ 120: Կրթական գործին կ'աջակցին Թագուհի Խտրլարեան, Ռոզին Հէքիմեան եւ Հռիփսիմէ Մկրտիչեան: Աղջիկներու ձեռագործի հսկողութիւնը կը ստանձնէ Հայկանուշ Տուզճեանը⁴:

³ Ազգ. Մեսրոպեան վարժարան (61 հոգի), Վարդանեան երկսեռ վարժարան (39 հոգի), Կաթողիկէներէն 13 եւ Բողոքականաց վարժարանէն՝ 4 աշակերտ:

⁴ Թ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ, Քաւուկեան Նոխազ, Տիպար եկեղեցականը, Հալէպ, 1963, էջ 120:

1938 թ. համայնքէն ներս տիրող կացութիւնը վերացնելու առնչութեամբ Տէր հօր եւ քանի մը ազգայիններու ջանքերը գաղութէն ներս համերաշխութիւն վերականգնելու գծով ի դերեւ դուրս կու գան, եւ այս վիճակը սուր բնոյթ կը ստանայ: Հոկտեմբերին կազմալուծուած թաղական խորհուրդի փոխարէն կը նշանակուին նորերը⁵, սակայն իրավիճակը կը մնայ լարուած: Ճարապլուսի ազգային կեանքէն ներս տիրող անհամաձայնութիւնը պատճառ կը հանդիսանայ Ազգային վարժարանի երփեղկման: Ճարապլուսի թաղականութիւնն ալ կը տեղեկացնէ իր հրաժարականի մասին⁶: Իրավիճակը փրկելու համար Բերիոյ թեմի Ազգային Առաջնորդարանի կողմէ լիազօրուած՝ վարչական պատուիրակութիւն մը կը մեկնի Ճարապլուս ուսումնասիրելու անհամաձայնութեան ծնունդ տուող պատճառները, «պայքարին վերջ մը տալու եւ աւելի քան երկու շաբաթէ ի վեր գոց մնացեալ ազգ. վարժարանը վերաբանալու» համար: Յանձնախումբը վերադարձին քաղաքական ժողովի նիստին քննարկելով խնդիրը կ'որոշէ՝ լուծարել դպրոցի հոգաբարձութիւնը, հսկողութիւնը յանձնել եկեղեցւոյ հովիւին եւ Գայմաքամի բարձր հովանաւորութեան: Զոյգ վարժարաններու ճակատը զետեղել Մեսրոպեան-Վարդանեան Ազգային Միացեալ վարժարան եւ ջանալ ապահովել ՀԲՀՄ-ի կողմէ խոստացուած 50 սթերլին նպաստը եւ այլն⁷:

1939 Հոկտեմբեր 2-ին Վարդանեան վարժարանը, որ կը վայելէր ՀԲՀՄ-ի հովանաւորութիւնը, կը վերաբանայ իր դռները, եւ կ'ունենայ 150 աշակերտ: Նոյեմբեր 12-ին վարժարանի տնօրէնը Տ. Ա. Տէր Ղազարեան ծնողական ժողով կը գումարէ եւ կ'անդրադառնայ ծնողական պարտականութեան՝ հանդէպ իրենց զաւակներուն⁸:

Հակառակ տարուած կազմակերպչական աշխատանքներուն, սակայն, համայնքէն ներս կը տիրէր անհամերաշխութիւն: Յարափոփոխ թաղական խորհուրդի կազմերը 25 Հոկտեմբեր 1942-ին եւ 28 Ապրիլ 1944-ին ապացոյց են այն մասին, որ համայնքէն ներս տարիներէ ի վեր տիրող իրավիճակի արդիւնք էր: «Թեմի բոլոր թաղականութիւններուն մէջ, բացառիկ վիճակ կը ներկայացնէ Ճարապլուսինը, այս գաղութին

⁵ Անդ, էջ 121:

⁶ Տէս «Զարթօնք» օրաթերթ, Բ. տարի, թիւ 465, 6 Ապրիլ, 1939, Պէյրութ, էջ 2—3:

⁷ Տէս անդ:

⁸ «Միութիւն» պաշտօնաթերթ ՀԲՀՄ, ԻԹ. տարի, Յունուար-Փետրուար, 1940, թիւ 201, Բարիզ, էջ 12:

մէջ տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող անհամերաշխ վիճակը անկարելի կը դարձնէ որեւէ թաղական կազմի տեւականութիւնը»⁹: Այս պայքարի հետեւանքով կարգ մը ազգայիններ իրենց զաւակները կ'ուղարկեն կաթողիկէ եկեղեցւոյ վարժարան: 1944-ին ներհամայնքային պայքարը վերջ կը գտնէ երկու վարժարաններու միացումով: Մխիթարական երեւոյթը այն է, կը գրէ Անցորդ, որ «երկու տարիէ ի վեր վերացած է կրթական երկուտութիւնը եւ զոյգ դպրոցները միացուած են, միացեալ հսկողութեան տակ»¹⁰: Ազգային Մեսրոպեան վարժարանը կը ստանձնէ նախակրթարանի, իսկ Վարդանեանը՝ մանկապարտէզի բաժինները: Միացեալ Մեսրոպեան-Վարդանեան վարժարանին տնօրէն կը նշանակուի Անդրանիկ Կիրակոսեանը, իսկ Աղանի Ֆատրեճեանը՝ մանկապարտէզականուհի¹¹: Սակայն միայն երկու տարի կը տեւէ այս համերաշխութիւնը:

1946-ին կը սկսի ներգաղթը եւ ներքին համերաշխութիւնը կը վերածուի նոր պայքարի՝ «մէկ միացած դպրոցը բաժնելով երկուքի»¹²: Մեսրոպեան դպրոցը կը գլխաւորէ Յարութիւն Նիկողոսեանը, իսկ Հապիպ Թորոսեանը՝ Վարդանեանը:

* * *

1945 թ. տեղի կ'ունենայ ֆրանսա-արաբական ընդհարումներ, որոնց ալիքը կը հասնի նաեւ Ճարապլուս: Քաղաքին զօրանոցը կը գտնուէր թրքական սահմանին մօտ:

Արաբները, չունենալով զինեալ բաւարար բանակ, բազմաթիւ գիւղերէն խուժող մարդոց վայր կը դարձնեն շրջանը: Չորս օրուան երկարատեւ փոխադարձ զինարձակումներէ ետք, ֆրանսացիներու հեռացումով կը խաղաղի կեանքը: Այս ընդհարումներու ժամանակ կը զոհուին նաեւ հայեր: Կողոպուտն ու թալանը հասած էին հայկական թաղերը: Սակայն շնորհիւ Թապուր երկու եղբայրներուն եւ Ներսէս Եղոյեանի շրջանը կը փրկուի կողոպուտէ:

Փոխուած էին դերերը: Անցեալի «Ֆելլահ»¹³ը այսօր ազատագրուած էր այդ կապանքներէն եւ կ'ողջունէր երկրի անկախութիւնը: «Պատերազ-

⁹ ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 45, թ. 66:

¹⁰ «Արեւելք» օրաթերթ, 25 Յունիս, 1946, Հալէպ, էջ 3:

¹¹ Լ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 70:

¹² Անդ, էջ 71:

¹³ Ֆելլահ- հողամշակ.

մը փոխած էր Ֆելլահներու ճակատագիրը, ու գիւղաքաղաքի հայ արհեստաւորները քիչ մը վախով, քիչ մըն ալ նախանձով կը նայէին երէկուան կորաքամակ, հլու հնազանդ արաբ հողագործներուն, այգեպաններուն ու պարտիզպաններուն, որոնք հիմա տօնական հագուստներով, թմբուկով ու զուռնայով խումբ-խումբ կը դիմէին աղբիւրի հրապարակը»¹⁴:

Անկախութեան համար տարուած պայքարին կու գային զուգորդուելու երկրին մէջ տիրող տնտեսական տագնապն ու ճարապլուսէն ներս ներկուսակցական պայքարը, որոնք հետզհետէ սրելով պատճառ կը հանդիսանային բնակչութեան նուազումին: Ճարապլուսի հայ համայնքը եւս առաւելագոյն չափով ազդուած էր երկրին վրայ ճնշող տնտեսական տագնապէն: Շատ քիչեր՝ արհեստաւորներ, ի գին մեծ գոհողութիւններու, կը յաջողէին ապահովել իրենց ապրուստը, մինչ երիտասարդութեան մէկ կարեւոր զանգուածը ստիպուած էր «տուն եւ ընտանիք ետեւ թողելով հեռանալ դէպի շրջակայ գիւղերը ու երբեմն մինչեւ Քամիշլի կամ աւելի խորերը երթալ, գործ որոնելու մղձաւանջէն տարուած»¹⁵:

Տխուր էր պատկերը:

1945-ին Ճարապլուս կը դրկուի Տ. Մեսրոպ քհնյ. Պապամճեանը որպէս հոգեւոր հովիւ: Վերջինս կը մնայ իր պաշտօնին մինչեւ 1952¹⁶:

* * *

1946 թ. մեծ հայրենագարծութեան աւետիսը հասած էր նաեւ Ճարապլուս. խաղաղ կեանքը, առաւել բարեփոխուելու փոխարէն, պղտորած էր: Միացեալ վարժարանը անգամ մը եւս բաժնուած էր երկուքի: «Ներգաղթի կոմիտէի մարդիկ եկան նաեւ գիւղաքաղաք: Գրեցին, ցանկագրեցին հայ ընտանիքները ու գացին՝ իրենց ետին ձգելով սպասումի անհանդարտ մթնոլորտ, տուներու առուծախ, վէճերու շարան, կռիւներ ու գինովութիւններ»¹⁷:

Ճարապլուսահայը թէեւ թրքախօս էր, բայց հայրենասիրութեան ոգին Եղեռնի օրերէն ի վեր վառ պահած էր իր հոգիին մէջ: Ներգաղթի անսպասելի լուրը, դրուատանքը, հայրենիքի գովքը, մէկընդմէջ Կարս-Արտահանի հայկական պատկանելիութեան յիշեցումը նոր թռիչք

¹⁴ Պ. ՀԱՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 96:

¹⁵ Ն. ՆԱՐԿԻՋԵԱՆ, Ազգային Կեանքը Ճարապլուսի Մէջ, «Եփրատ», 13 Մարտ, 1949, Հալէպ:

¹⁶ Լ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 72:

¹⁷ Պ. ՀԱՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 97:

տուած էր հայու երազանքին: Պետրոս Հաճեան կը գրէ, որ «...Հայատառ թրքերէն գրքոյկ մը կը շրջէր տուներու մէջ ու խլուէր ձեռքէ ձեռք: Տաղաչափուած երկարաշունչ ոտանաւոր մըն էր...»: «Գիւղաքաղաքին մէջ տեսեման կ'ըսէին անոր, եւ տուներու մէջ հաւաքուած կիներ յափշտակութեամբ կը կարդային կամ կ'ունկնդրէին զայն՝ գոյնզգոյն թաշկինակներով սրբելով իրենց աչքերը...»¹⁸:

Հակառակ Ճարապուսի ազգայիններու կարգադրութեան՝ կոմիտէի մեկնումէն ետք ամեն ինչ կը մնայ անպատասխան: Կ'որոշեն պատուիրակուծին ուղարկել Հալէպ՝ Ներգաղթի կոմիտէի անդամներուն հետ հանդիպելու: Սակայն անոնց գործը Հալէպի մէջ շատ արագ ընթացք չ'ունենար: Ճարապուսահայը երթալու մարմաշով կ'ապրի տարուան մնացած օրերը՝ յուսալով որ յաջորդող կարաւաններով իրեն բախտ պիտի վիճակուէր մեկնելու իր երազած Հայրենիքը: Սակայն շատերու երազանքը չիրականացաւ: Անոնցմէ ոմանք, ծախած ըլլալով իրենց ունեցուածքը, կը ստիպուէին գաղթել դէպի քաղաք՝ նոր բախտ որոնելու համար:

1946 թ. երկրորդ կիսուն թաղականութիւնը եւ Հոգաբարձութիւնը՝ կազմալուծուած էր. «Կատարեալ անտիրութիւն՝ ազգային կեանքին մէջ, ոչ թաղականութիւն, ոչ հոգաբարձութիւն»: «...5 հոգինոց թաղականութեան 2 անդամները բոլորովին ձեռնթափ եղած են իրենց պարտականութենէն, միւս երկուքը նոյնպէս անտարբեր են առանց պաշտօնապէս հրաժարած ըլլալու. հրապարակին վրայ կայ միայն ատենապետը»¹⁹: Թաղականութեան ատենապետի ջանքերով կը կազմուի երեք հոգիէ բաղկացած հոգաբարձութիւն մը համայնքի տարբեր գաղափարներու յարող մարդոցմէ, որպէսզի «...չստեղծուի երկուութիւն կրթական հարցին մէջ»: Սակայն Հոգաբարձութիւնը մատնուած էր անել կացութեան, որովհետեւ «տարին կը լրանայ եւ վճարումները կատարուած չեն, աշակերտութիւնը պիտի վճարէր 1800 Ս. Ոսկի թոշակ. վճարուած է միայն 750 Ս. Ո., 1050-ը կը մնայ գանձելի...»²⁰: Աւելին, նիւթական անցուկ պայմանները պատճառ կը հանդիսանային, որ կրթական գործը շարունակէին տեղական ուժերով եւ հնարաւորութիւն չունենան «դուրսէն նոր ուժ հրաւիրելու, նիւթական մտահոգութիւններով...»²¹:

¹⁸ Անդ, էջ 101:

¹⁹ «Արեւելք» օրաթերթ, 21 նոյեմբեր, 1946, Հալէպ, էջ 2:

²⁰ «Արեւելք» օրաթերթ, 25 Յունիս, 1946, Հալէպ, էջ 2, 3:

²¹ «Արեւելք» օրաթերթ, 21 նոյեմբեր, 1946, Հալէպ, էջ 2:

ժողովուրդի տնտեսական կացությունն ալ ողբալի էր. «...շուկան մեռելութեան մէջ. ոչ մէկ շարժում, առեւտրական ձեռնածալ նստած գործաւորներ անգործ ու անզբաղ...»²²:

1946-ին Ազգային Առաջնորդարանին կողմէ նշանակովի կ'ընտրուի թաղականութիւնը:

1949 թ.-էն ետք եւս Ճարապլուսի մէջ տնտեսական ճգնաժամը կը շարունակուի:

ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ (ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ, ԿԱԹՈՂԻԿԷ)

1. Ճարապլուսի Հայ աւետարանական եկեղեցին

Կիրիկիոյ հայ Աւետարանական եկեղեցւոյ զաւակներուն մէկ մասը թէեւ հեռացած էր Այնթապէն, Մարաշէն, Ուրֆայէն եւ Ատանայէն դէպի Սուրիա եւ Լիբանան, սակայն «...վառ շահագրգռութիւն» կը պահէր իր «լքեալ բնագաւառին համար ու մասնաւորապէս հոն շարունակուող Աւետարանական գործին հանդէպ...»

Քրիստի եւ Պրէզիկի հայութիւնը դեռ կարեւոր մասերով» կը շարունակէին մնալ իրենց հայրենի հողին վրայ, բայց աւելի ուշ անոնք ալ պիտի ստիպուէին արտագաղթել եւ հաստատուիլ՝ «առաջինները Ազէզ եւ վերջինները Ճարապլուս»։ այսպէս սկիզբ կ'առնէ հայ Աւետարանական համայնքի կազմաւորումը²³:

Պէրէճիկէն վերապրող գաղթականներուն հետ դէպի Ճարապլուս կը հաստատուին Մովսէս, Սարգիս եւ Յովհաննէս Ատուրեանները²⁴: Պէրէճիկի քարոզիչ եւ Աւետարանական դպրոցի ուսուցիչ պատուելի Հապիպ Տարաքճեանը²⁵ եւս իր հայրենակիցներուն հետ հաստատուելով

²² «Արեւելք» օրաթերթ, 25 Յունիս, 1946, Հալէպ, էջ 3:

²³ ՎԵՐ. ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ, Լուսաշաւիղ պատմութիւն հայ աւետարանական շարժման 1846–1946, Պէյրութ, 1947, էջ 479

²⁴ Կը պատմուի, թէ «Յովհաննէս երկու շերտ կ'առնէ» եւ կը ձեռնարկէ եկեղեցւոյ շինութեան, հողէ ազիւններով շորս պատ կը կառուցէ, իսկ բաց մնացած տանիք փակելու համար կը դիմէ ՀԲԸՄ-ի, որոնք կ'օժանդակեն եւ այդ վայրը կը ծառայէ, որպէս պաշտամունքի վայր: ՏԵՆ Մ. ՄԵԼՔՈՆԵԱՆ, Ճարապլուսի Հայ Աւետ. եկեղեցիի եւ զանգակին պատմականը, «Զարթօնք» օրաթերթ, 8 Մարտ, 2006, Պէյրութ:

²⁵ Վերապատուելի Հապիպ Տարաքճեան ծնած է Պէրէճիկ 1889 թ.-ին: 1923–1927 թթ. եղած է ուսուցիչ քարոզիչ Ճարապլուսի հայ աւետարանական եկեղեցւոյ: ՏԵՆ «Ոսկեմատեան», «Պատմութիւն Մերձ. Արեւելքի հայ աւետ. միութեան», հտ. Բ., Պէյրութ, 1951, էջ 27–28:

Ճարապլուս 1923 թ. Մարտ ամսուն, առանց լուսամուտի սենեակ մը կը վարձէ արաբ գիւղացիէ, հոգեւոր պաշտամունք կատարելու նպատակով²⁶: Ժողովուրդը, չունենալով նիւթական աջակցութիւն, իր միջոցներով կը կառուցէ շէնքը՝ ոմանք իրենց նիւթական օժանդակութեամբ, ոմանք ալ իրենց «բազուկներով»: Վարձով կառոյցին մէջ սկիզբ առած հոգեւոր եւ կրթական կեանքը երկու տարի կ'ընթանար հետեւեալ դասաւորումով՝ շէնքը շաբթուան վեց օրերուն կը գործածուէր որպէս դպրոց, իսկ Կիրակի օրերուն՝ եկեղեցի²⁷: Դպրոցը կ'ունենայ մանկապարտէզ եւ հնգամեայ նախակրթարան:

Այսպիսով, պատուելի Տարագճեանի ջանքերով Ճարապլուսի մէջ կը սկսի «առօրեայ դպրոց մը, եւ ժողովուրդը կը լսէ կենարար խօսքը»:

1923—1924 թթ. եկեղեցւոյ զաւակներէն ոմանք կը հաստատուին Պէյրութ:

«Զարթօնք»-ի մէջ կը կարդանք, որ 1923—1924 թթ. Աւետարանական եկեղեցին ունեցած է 120 հետեւորդ, դպրոց յաճախած են 67 աշակերտ, Կիրակնօրեան ունեցած է 50 սան, իսկ Զանաւիրացը՝ 20 հոգի²⁸: 1926 թ.-ի տուեալներով՝ 130 անձ²⁹:

Աւետարանական համայնքի հովանաւորող վարժարանը միջյարանուանական եղած էր, պատուելին եւ եկեղեցւոյ, եւ դպրոցի պատասխանատուն էր: Նորա պաշտօնավարութեան տարիները կ'ըլլան՝ (1923—1927, 1929—1939 թթ.) միաժամանակ կատարելով դպրոցի գործը³⁰: Պատուելին ուսման համար երկու տարի բացակայելով, բեմը կը ստանձնէ Պատուելի Յակոբ Կիրլիւքեան, որ 1927—1928 թթ. փոխադրուած էր Ճարապլուս: Ան կը վարէ քարոզիչ-ուսուցիչի պաշտօն³¹: Պատուելի Յակոբ Կիրլիւքեան

²⁶ Հիւսիսային Սուրիոյ հայ աւետարանական եկեղեցին թէեւ շէնքեր ունէր, բայց եւ այնպէս անոնք անյարմար կառոյցներ էին: Այլ քաղաքներու մէջ աւետարանական եկեղեցին ընդհանրապէս կառոյցներ չունէր: Ուստի եկեղեցական եւ կրթական կառոյցներուն նորոգութենէն բացի, կը կառուցեն նաեւ նորերը: Տէն «Ոսկեմատեան», «Պատմութիւն Մերձ. Արեւելքի հայ աւետ. միութեան», հտ. Ա., էջ 114—115:

²⁷ «Ոսկեմատեան», հտ. Ա., Պէյրութ, 1950, էջ 315:

²⁸ Մ. ՄԵԼՔՈՆԵԱՆ, Ճարապլուսի Հայ Աւետ. եկեղեցիի եւ զանգակին պատմականը, «Զարթօնք» օրաթերթ, 8 Մարտ, 2006, Պէյրութ: Իսկ Լուսին Ճէպճեան կը յիշէ, որ Հայ աւետարանական եկեղեցին 10—15 ընտանիք նոյնպէս ունէր իր աղօթատեղին ու դպրոցը: Սակայն չէ յիշատակուած տուեալ մանրամասնութեան թուականը: Տէն Լ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 60:

²⁹ «Ոսկեմատեան», հտ. Ա., էջ 315:

³⁰ ՎԵՐ. ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՒՆԻ, նշ. աշխ., էջ 510:

³¹ «Ոսկեմատեան», հտ. Բ., էջ 27:

նին կը յաջորդէ պատուելի (Վերապատուել) Ասատուր Պէպէրեանը³², որ 1928 թ. ձեռնադրուած էր Հալէպ, գալով Ճարապուլու երկու տարի, 1940—1942 թթ., կը ստանձնէ պատասխանատու պաշտօն³³; 1942—1945 թթ. Ճարապուլուի ուսուցիչ-քարոզիչն էր Տ. Յովհաննէս Հայտոսթեանը³⁴, որմէ ետք բեմը թափուր կը մնայ:

1945 թ.-ի ֆրանսա-արաբական ուժերու բախման պատճառով հետզհետէ սկիզբ կ'առնէ արտագաղթը դէպի Հալէպ եւ մանաւանդ Պէյրութ, ինչ որ պատճառ պիտի հանդիսանար աւետարանական համայնքի նօսրացման: «Թէպէտ տակաւին հոն կը մնան տասնեակ մը հայ աւետարանական ընտանիքներ՝ սակայն կրթական եւ հոգեւոր գործերը կը դադրին»³⁵: 1943 թ.-ին բնակչութիւնը կը հաշուէր 101 մարդ:

1944 թ.-ին Ճարապուլուի հայ աւետարանականներու դպրոցն ու եկեղեցին շարունակած են իրենց գործունէութիւնը պատուելի Հայտոսթեանի ջանքերուն շնորհիւ: Այս թուականին կը նորոգուի շէնքը³⁶: Իսկ 1945 թ.-էն ետք արդէն դպրոցը փակած էր իր դռները³⁷:

2. Ճարապուլուի Հայ կաթողիկէ եկեղեցին

«Եփրատ» թերթը կը գրէ, որ 1930-ին Հալէպի հայ կաթողիկէ Առաջնորդարանը հող մը գնած է Ճարապուլուի մէջ՝ նպատակ ունենալով դպրոց մը կառուցել³⁸:

Բերիոյ թեմի կաթողիկէ առաջնորդ Գէորգ արք. Կորդիքեանի օրով Ճարապուլուի մէջ կը կառուցուի «եկեղեցի եւ քահանայատուն, որովհետեւ «...բազմաթիւ հայ կաթողիկէ հաւատացեալներ գաղթած էին Պէրէճիքէն»³⁹: Սակայն այլ աղբիւրներէ կ'իմանանք, որ կաթողիկէ համայնքը սկզբնական շրջանին՝ 1932-ին, օժտուած եղած է մատուռով. «... թեմին մէջ աւարտած եւ օրհնուած են Ճարապուլուի եւ Ապուքէմալի մա-

³² Տէս Մ. ՄԵԼՔՈՆԵԱՆ, Ճարապուլուի Հայ Աւետ. եկեղեցիի եւ զանգակին պատմականը, «Զարթօնք» օրաթերթ, 8 Մարտ, 2006, Պէյրութ:

³³ Տէս «Ոսկեմատեան», հտ. Բ., էջ 29. անդ, հտ. Ա., էջ 316:

³⁴ Անդ, հտ. Բ., էջ 42, 316:

³⁵ Անդ, հտ. Ա., էջ 142:

³⁶ «Ջանասէր», է. տարի, Մայիս, 1944, թիւ 5, Պէյրութ, էջ 136:

³⁷ «Ոսկեմատեան», հտ. Ա., էջ 316:

³⁸ «Եփրատ», օրաթերթ, Գ. տարի, Հալէպ, 18 Յունիս, 1930:

³⁹ «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գք. Ե., Հալէպ, 1996, էջ 412:

տուռները»⁴⁰։ Մատուռը յետագային, 1933–1938 թթ., պիտի վերածուներ քարաշէն Ս. Աստուածածին-Տիրամօր եկեղեցիի⁴¹։ «Արքեպիսկոպոս Գրիգոր Գերապայծառը բազմաթիւ թաղամասեր կառուցած էր փախստականներուն համար եւ բազմաթիւ եկեղեցիներ ալ կը կառուցէր ճարապիտութիւն մէջ»⁴²։

Այլ հաւաստի աղբիւր կը նշէ, որ ճարապիտութիւն հայ կաթողիկէ Ս. Աստուածածին-Տիրամօր եկեղեցւոյ շինութեան մէկ երրորդը հայթայթած է Հալէպի Վազֆը, «ինչպէս նոյն Վազֆի հաշուետետերերը կը վկայեն լուսահոգի Կորդիքեան Արքեպիսկոպոսի օրով գրուած»⁴³։ Իսկ նորաշէն դպրոցի առաջին յարկը իր բաժանումներով կառուցուած է Ֆրանսական Բարձր Մարզականութեան նպաստով, «ինչպէս կը վկայեն թիւ 250 վճիռը եւ ճարապիտութիւն ժողովրդապետի հաշուեցուցակը....»⁴⁴։

Եկեղեցւոյ կառուցումը կը տեւէ հինգ տարի։ 1938 թ.-ին եկեղեցին կ'օծուի Տէր Մանուէլ վարդապետի ձեռամբ⁴⁵։ «Գեղարդ» տարեգիրքի մէջ կը կարդանք, որ տարիներ ետք դպրոց մըն ալ կը կառուցուի եւ կը յանձնուի «Հայ քոյրերուն»՝ ծառայելու հայ երեխաներու դաստիարակութեամբ⁴⁶։

Հայ Կաթողիկէ վարժարանը սկիզբը երկսեռ եղած է եւ 1933 թ. -ին վստահուած է Անարատ Յղութեան Քոյրերուն։ 1936 թ. եկեղեցին ունեցած է 115 ընտանիք հետեւորդ, որոնցմէ քսաներկուքը յոյն, ասորի, քիլտանի եւ մարոնիթ կաթողիկէներ։

1936 թ. թղթակցութեան մը մէջ կը կարդանք, որ կաթողիկէները մանչերու վարժարան չեն ունեցած. «Իսկ աղջիկներու համար լաւագոյնը ունինք. անոր բարի ընթացքին եւ յաջողութեան լաւագոյն վկայականը, մեղուաջան Ա. Յ. Քոյրերուն ներկայութիւնը. անոնք չորս հոգի են»⁴⁷։

⁴⁰ «Աւետիք» պաշտօնաթերթ, Ա. տարի, թիւ 2, Պէյրութ, 1932, էջ 9։

⁴¹ Այլ աղբիւրներու մէջ նշուած է ճարապիտութիւն Ս. Սիրտ Յիսուսի եկեղեցի։ Տե՛ս «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գք. Ե., Հալէպ, 1996, էջ 416։

⁴² Այլ աղբիւր մը կը նշէ, որ «Արքեպիսկոպոս Գրիգոր Գերապայծառը բազմաթիւ թաղամասեր կառուցած էր փախստականներուն համար եւ բազմաթիւ եկեղեցիներ ալ կը կառուցէր ճարապիտութիւն մէջ»։ Տե՛ս ԿԻՐԵՂ ԵՊՍ. ԶՕՀՐԱՊԵԱՆ, Յուշեր, 2007, Վենետիկ, էջ 162։

⁴³ «Աւետիք» պաշտօնաթերթ, Ե. տարի, 10–11, թիւ 54–55, Հոկտեմբեր–Նոյեմբեր, 1936, Պէյրութ, էջ 215։

⁴⁴ «Աւետիք» պաշտօնաթերթ, Ե. տարի, 10–11, թիւ 54–55, Հոկտեմբեր–Նոյեմբեր, 1936, Պէյրութ, էջ 215։

⁴⁵ Լ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ–ՃԷՊԷՃԵԱՆ, նշ. աշխ., էջ 77։

⁴⁶ «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գք. Ե., Հալէպ, 1996, էջ 412։

⁴⁷ «Աւետիք» պաշտօնաթերթ, Ե. տարի, 8, թիւ 52, Օգոստոս 1936, էջ 179։

Վարժարանէն ներս կ'ուսուցանուէր հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, երգ, դաշնամուր եւ ձեռագործ:

1940-ական թուականներուն Ճարապիտուսի Հայ Կաթողիկէ եկեղեցին ունէր 15–20 ընտանիք: Համայնքը կապուած էր Հալէպի կաթողիկէ Առաջնորդարանին: Տէր Մանուէլ վրդ. յաջորդած է Տ. Գրիգոր վրդ. Այվազեանը: 1946-ին Ճարապիտուս կը ժամանէ Պետրոս Վրդ. Զիզմէճեան: Ան մինչեւ 1980-ական թուականներու սկիզբը կը շարունակէ մնալ Ճարապիտուս՝ տէր կանգնելով եկեղեցւոյ:

1945-ին կը դադրի ֆրանսական հոգատարութիւնը: Քոյրերէն ոմանք արտասահման կը մեկնին, իսկ մնացեալները չեն կրնար շարունակել գործը: Դպրոցը կը փակուի⁴⁸:

* * *

1950-ական թուականներու սկիզբը համայնքը իր երեք յարանուանութիւններով կը շարունակէր համայնքային կեանքը, բայց աւելի նուազ հաւատացեալներով: Առաքելական եւ Կաթողիկէ եկեղեցիները ունէին իրենց հոգեւոր հովիւները: Բողոքականներու թիւին նուազումին պատճառով կը բաւարարուէին միայն Հալէպէն ուղարկուած հոգեւոր հովիւներով: 1952-էն ետք Ճարապիտուսի Առաքելական համայնքը եւս կը զրկուի հոգեւոր հովիւէ⁴⁹:

Այստեղ բնակութիւն հաստատողներու մէկ մասը եղած է առեւտրական, բժիշկ եւ «այլ դասակարգերու պատկանող հայեր»⁵⁰: Իսկ տեղացիները զբաղմունքն էր երկրագործութիւնը: Միութեանական աշխատանքները կը շարունակեն իրենց հայանպաստ գործունէութիւնը: Ազգային դպրոցը կը հովանաւորուէր Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդի կողմէ: Ճարապիտուսի մէջ վերջին տարիներուն կառավարութեան կողմէ եւս կը հիմնուի պետական դպրոց մը, ուր կը յաճախեն բոլոր համայնքներու աշակերտները անխտիր⁵¹:

⁴⁸ Յ. ԱՐՔ. ՆԱԶԼԵԱՆ, Պատմական Տեսութիւն Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութեան վրայ, Անոր Հարիւրամեայ Տարեդարձին Առթիւ (1847–1947). Կեանք եւ գործ, Պէյրութ, 1948, էջ 269–272:

⁴⁹ Լ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՃԷՊԷՃԵԱՆ, նշ., աշխ., էջ 73:

⁵⁰ Ս. ՊԱԼԵԱՆ, Կեանքը Ճարապիտուսի մէջ, «Հայրենիք» օրաթերթ, թիւ 12653, Պոսթոն, 1953:

⁵¹ Անդ:

1970–80-ական թուականներու Ճարապուլուս արդէն դատարկուած էր հայութենէ: Մեկնողներուն տեղերը լրացուցած էին մերձակայ գիւղերու քիւրտերը:

Ստորեւ կը ներկայացնենք Ճարապուլուսի հայ առաքելական համայնքի թուապատկերը Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւներուն համաձայն⁵².

Ճարապուլուս			
տարեթիւ	մարդ	տարեթիւ	մարդ
1932	1350	1944 ⁵³	1150
1933	868	1945 ⁵⁴	960 (980)
1934	785	1946 ⁵⁵	1024
1935	741	1947	714
1936	809	1948 ⁵⁶	679
1937	1060	1949	—
1938	1048	1950	633
1939	1123	1951	550
1940	1172	1952	—
1941	1159	1953 ⁵⁷	230
1942 ⁵⁸	1242	1954	435
1943 ⁵⁹	1070	1955 ⁶⁰	428

Եզրակացութիւն

Սուրիոյ Ճարապուլուսի հայ համայնքը ձեւաւորուած է յետեղեռնեան տարիներուն Պէրէճիկէն, Ուրֆայէն, Այնթապէն, Էյնէշէն, Նիսիպիւնէն եւ

⁵² ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գործ 26: Քաղաքական ժողով, տարեկան վիճակագրութիւն Սուրիոյ գաղութին, 1932–1955 թթ.:

⁵³ ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 45, թ. 53: Հոգեւոր հովիւ Մեսրոպ քահանայ Պապամճեան:

⁵⁴ ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 45, թ. 54:

⁵⁵ «Արեւելք» օրաթերթ, 14 Յուլիս, 1946, Հալէպ, էջ 2:

⁵⁶ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւ (ԲԹ ԱԱԱ), Դարան Դ., գործ 25:

⁵⁷ ԲԹ ԱԱԱ, Դարան Բ., գործ 62. «28 Մայիս 1952 թուակիր նամակ ուղղուած ամերիկահայ մտաւորական տիար Հ. Քարեանին՝ Նախագահ Հայ կրթական հիմնարկութեան»:

⁵⁸ ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 45, թ. 132: Մեսրոպեան վարժարան 155 հոգի:

⁵⁹ ՄՏԿԿ ԲԹԱ, հ. 3, ց. 1, թղթ. 45, թ. 133:

⁶⁰ ԲԹ ԱԱԱ, Դարան Դ., գործ 25:

Ճիպինէն գաղթող հայերով: Բնակչութեան մեծ մասը պէրէճիկցի հայեր եղած են: Հայ երեք յարանուանութիւններն ալ՝ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական, իրենց ներդրումը ունեցած են համայնքի կազմաւորման. կառուցած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները. որպէս մշակ, արհեստաւոր եւ առեւտրական նպաստած են գիւղաքաղաքի զարգացման: Հայերը ապրած են միասին եւ առանձին թաղամասերու մէջ շշփուելով գիւղաքաղաքի միւս փոքրամասնութիւններուն (քիւրտեր, արաբներ եւ արաբ քրիստոնեաներ) հետ:

Ներգաղթի եւ ներքին տեղաշարժի պատճառով 1980-ական թուականներուն գրեթէ Ճարապլուս դատարկուած էր հայութենէ:

2011 թ.-էն ետք Սուրիոյ մէջ սկիզբ առած պատերազմի ընթացքին Ճարապլուսը նաեւ թիրախ կը դառնայ Թուրքիոյ կողմէ:

Արդ, Ճարապլուսի հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը ո՛չ միայն պատմագիտական, այլեւ քաղաքական մեծ նշանակութիւն ունի եւ այժմէականութիւն: Սակայն համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը յաճախ դուրս մնացած է գիտնականներու եւ հետազօտողներու տեսադաշտէն: Ուստի այս յօդուածը կրնայ սկզբնաղբիւր հանդիսանալ Ճարապլուսի հայ համայնքի ամբողջական պատմութեան ուսումնասիրութեան:

РЕЗЮМЕ

Армянская община Джараблуса в Сирии представила мозаику армянских иммигрантов, переживших Геноцид. Большинство из них мигрировало, особенно из Пережика, Урфы, Айнтапа, Эйнеша, исторического Нисипина и Джибина.

Благодаря совместной работе трех деноминаций общины (Апостольской, Католической и Евангелической) Джараблус стал армянской общиной, которая за свою почти пятидесятилетнюю историю внесла свой вклад в экономическое и культурное развитие как самой общины, так и всего города. Своими церквями и образовательными учреждениями община способствовала делу сохранения армянской идентичности и боролась против широко распространенного турецкого языка.

SUMMARY

The Armenian community of Jarablous in Syria presented a mosaic of Armenian immigrants who survived the genocide. Most of them migrated, especially from Perejik, Urfa, Ayntap, Einesh, historical Nisipin and Jibin.

Thanks to the collaboration of three denominations of the community — Apostolic, Catholic and Evangelical, Jarablous became the Armenian community, where during its nearly fifty-year history, it contributed to the economic and cultural development of both the community and the entire city of Jarablous. The community, with its churches and schools, supported the preservation of the Armenian identity and fought against the widespread use of the Turkish language.

